ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՑ 29-Ը ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **«29» նոյեմբերի 2021թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը, և հաշվի առնելով տեսչական մարմնում առկա հրատապ լուծում պահանջող հարցերը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2021 թվականի նոյեմբերի 26-ին և ավարտվեց 2021 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը 14^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ.Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Հակոբյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն»

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրի ներկայացում:
2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրի ներկայացում:
3. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվության ներկայացում:
4. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2022 թվականի ծրագրի ներկայացում:
5. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի 1-3-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների և 2020-2021 թվականների 1-3-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերլուծության ներկայացում:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվել են կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»
2. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ռ. Գևորգյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Ք. Գրիգորյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Ս. Ալոյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Բ. Փափազյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
8. Ա. Հակոբյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 8 «կողմ»:
Հարց 2-րդ՝ 8 «կողմ»:
Հարց 3-րդ՝ 8 «կողմ»:
Հարց 4-րդ՝ 8 «կողմ»:
Հարց 5-րդ՝ 8 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հեռակա նիստին մասնակցած խորհրդի 8 անդամներից 8-ը օրակարգի 5 հարցերին քվեարկել են «կողմ»:

Ա. Ասոյանը հայտնել է, որ օրակարգային հարցերի վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից աշխատանքային կարգով ներկայացվել են դիտողություններ, որոնք ընդունվել են տեսչական մարմնի կողմից, որի արդյունքում բոլոր 5 հարցերին քվեարկում է «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

Հարց 1. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագիրը:

Հարց 2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

Հարց 3.Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությանը:

Հարց 4. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2022 թվականի ծրագիրը:

Հարց 5. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի 1-3-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների և 2020-2021 թվականների 1-3-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերլուծությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ. Դումանյան**

Ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

Ստորագրություն